

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/7
17 մարտի 2018թ.

Քննարկվեց Ա/Ձ Վահան Սաֆարյանի միջնորդությունը 19.01.2018թ. ներկայացված շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Ա/Ձ Վահան Սաֆարյանի բերված փաստարկները.

Ա/Ձ Վահան Սաֆարյանը հայտնում է, որ իր կողմից 19.01.2018թ. թյուրիմացաբար ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Այնուհետև ներկայացրել է դիմում, նշված հայտարարությունը չեղյալ համարելու վերաբերյալ, սակայն դիմումը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 10-րդ բաժնի կողմից մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Վահան Սաֆարյանը խնդրում է անվավեր ճանաչել 19.01.2018թ. ներկայացված շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Վահան Սաֆարյանը զբաղվում է բացառապես ձկնաբուծությամբ: Նշվեց նաև, որ Ա/Ձ Վահան Սաֆարյանի կողմից 19.01.2018թ. թյուրիմացաբար ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Այնուհետև, Ա/Ձ Վահան Սաֆարյանը փորձել է ուղղել թույլ տրված սխալը և դիմում է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 10-րդ բաժնի՝ նշված հայտարարությունը չեղյալ համարելու վերաբերյալ, սակայն ՀՀ հարկային օրենսգրքով նման դրույթ նախատեսված չլինելու հիմքով նրա դիմումը մերժվել է:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ԱԱՀ վճարողներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 58.35 միլիոն դրամը.

2) հարկային տարվա այն պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, որ պահին կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ օրենսգրքի 254-րդ

հողվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցում է 58.35 միլիոն դրամը: Ընդ որում, հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գերազանցելու հիմքով ԱԱՀ վճարող համարվելու դեպքում ԱԱՀ-ն հաշվարկվում և վճարվում է ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով: Գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամը գերազանցելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ նույն մասում նշված հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով ԱԱՀ-ի շեմը գերազանցելու օրը:

3) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, եթե կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ա/Ձ Վահան Սաֆարյանը մինչև 20.02.2018թ. ինքնուրույն հայտնաբերել է տեղի ունեցած թյուրիմացության մասին և դիմել է հարկային մարմին, հետևապես Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է աջակցել հարկ վճարողին տեղի ունեցած թյուրիմացությունը ճշտելու համար և հնարավորություն ընձեռել ինքնուրույն ընտրելու 2018թ. ընթացքում համապատասխան հարկատեսակով հարկման դաշտը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Անվավեր ճանաչել Ա/Ձ Վահան Սաֆարյանի կողմից 19.01.2018թ. ներկայացված շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

